ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԱՐՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔ

---

**ք. Աբովյան** **18/03/2025**

# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 8/3
# ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 26 անդամ:

Բացակա էր՝ Հասմիկ Խաչատրյանը (վիրահատվել է և գտնվում է բուժման մեջ)

**Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝** Աննա Չոբանյանը, Դիաննա Երեմյանը, Արմեն Շմավոնյանը, Արամ Վիրաբյանը, Միքայել Պողոսյանը, Ջանինա Սարգսյանը

**Նիստը վարում էր Համայնքի ղեկավար՝ Էդուարդ Բաբայանը**

**Նիստն արձանագրում էր Աշխատակազմի քարտուղար՝ Վանիկ Բաբաջանյանը**

Նախքան օրակարգի ներկայացումը, աշխատակազմի քարտուղար Վ. Բաբաջանյանը ներկայացրեց թիվ 29 Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի 27.02.2025թ. N 1 արձանագրությունը, որի համաձայն Աբովյան համայնքի ավագանու անդամ Կարեն Սերոբյանի («Հանրապետություն» խմբակցություն) լիազորությունները վաղաժամկետ դադարեցվել են, և ավագանու անդամի մանդատը տրվել է նույն խմբակցության ընտրական ցուցակի հաջորդ թեկնածու Վան Աշոտի Հարությունյանին:
Համայնքի ղեկավարը և ավագանու անդամները շնորհավորեցին ավագանու նոր անդամին:

**ԼՍԵՑԻՆ**

***ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 18-Ի ՈՒԹԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ԵՐՐՈՐԴ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***(Զեկ. ՎԱՆԻԿ ԲԱԲԱՋԱՆՅԱՆ)***

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 14-րդ և 62-րդ հոդվածների, Աբովյան համայնքի ավագանին ***ո ր ո շ ու մ է՝***

1. Հաստատել Աբովյան համայնքի ավագանու 2025 թվականի մարտի 18-ի ութերորդ նստաշրջանի հերթական երրորդ նիստի հետևյալ օրակարգը.

1) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Աբովյան համայնքում ճանապարհային երթևեկության կազմակերպման սխեման հաստատելու մասին.

2) Աբովյան համայնքի ավագանու 2020 թվականի հունիսի 10-ի N 26-Ա և 2022 թվականի դեկտեմբերի 28-ի N 230-Ա որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին.

3) Համայնքային շահերի պաշտպանության նպատակով իրավասու դատարան հայց ներկայացնելու մասին.

4) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Աբովյան համայնքի 2024 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը հաստատելու մասին.

5) Աբովյանի համայնքապետարանի հաշվեկշռում հաշվառված գույքերը համայնքային ենթակայության ոչ առևտրային կազմակերպությունների հաշվեկշիռներում ներառելու մասին.

6) «Դեմեր» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից նախատեսվող գործունեության իրականացմանը նախնական համաձայնություն տալու մասին.

7) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Աբովյան համայնքի 2024 թվականի տարեկան աշխատանքային պլանի իրականացման վերաբերյալ հաշվետվությունը հաստատելու մասին.

8) Աբովյան համայնքի սեփականություն հանդիսացող հողամասը «ԾԱԼԵՏ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը կառուցապատման իրավունքով տրամադրելու մասին.

9) Աբովյան համայնքի սեփականություն հանդիսացող հողամասը կառուցապատման իրավունքով «ԻՄԻՋ ՍՏՐՈՅԿՈՄՊԼԵՔՍ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը տրամադրելու մասին.

10) Աբովյան համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերը կառուցապատման իրավունքով «ԲԻԹԻԷԼ ՍԵՐՎԻՍԻՍ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը տրամադրելու մասին.

11) Աբովյան համայնքի սեփականություն հանդիսացող հողամասը կառուցապատման իրավունքով «Էդգար Գալստյան Արտակի» անհատ ձեռնարկատիրոջը տրամադրելու մասին.

12) Աբովյան համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերը կառուցապատման իրավունքով «ԿԻՆԳ ԴԵԼՅՈՒՔՍ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը տրամադրելու մասին.

13) Աբովյան համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 24-ի N 211-Ա որոշման մեջ լրացում կատարելու մասին.

14) Աբովյան համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 11-ի N 191-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին.

15) Գերմանական միջազգային համագործակցության ընկերության կողմից մեկնարկած տեղական զարգացման հիմնադրամի շրջանակներում հայտարարված դրամաշնորհային մրցույթին մասնակցության վերաբերյալ.

16) Աբովյան համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 24-ի N 230-Ա որոշման մեջ լրացումներ կատարելու մասին.

17) Աբովյան համայնքի Աբովյան քաղաքի Նաիրյան փողոցի թիվ 3 հասցեում գտնվող մարզահամալիրը վարձակալությամբ տրամադրելուն համաձայնություն տալու մասին.

18) Աբովյան համայնքի Բալահովիտ գյուղում գտնվող 07-018-0077-0016 կադաստրային ծածկագրով հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին.
19) Աբովյան համայնքի Արամուս գյուղում գտնվող 07-013-0176-0002 կադաստրային ծածկագրով հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին.
20) Աբովյան համայնքի Պտղնի գյուղում գտնվող 07-054-0315-0273 կադաստրային ծածկագրով 0.075 հեկտար մակերեսով հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին.
21) Աբովյան համայնքի սեփականություն հանդիսացող Աբովյան քաղաքի Սարալանջի փողոցի թիվ 11/11 հասցեում գտնվող հողամասը Հայկասար Սոլոմոնյանին ուղղակի վաճառքով, ընդլայնման նպատակով օտարելու մասին.
22) Աբովյան համայնքի սեփականություն հանդիսացող Աբովյան քաղաքի 7-րդ միկրոշրջանի 1-ին թաղամասի թիվ 127/1 հասցեում գտնվող հողամասը Հեղինե Թակվորյանին ուղղակի վաճառքով, ընդլայնման նպատակով օտարելու մասին.
23) Աբովյան համայնքի սեփականություն հանդիսացող Աբովյան քաղաքի Երիտասարդական փողոցի թիվ 1/19 հասցեում գտնվող հողամասն Արման Դավթյանին ուղղակի վաճառքով, ընդլայնման նպատակով օտարելու մասին.
24) Աբովյան համայնքի սեփականություն հանդիսացող Աբովյան քաղաքի Է. Ավագյան փողոցի թիվ 14/2 հասցեում գտնվող հողամասը Վահան Մնացականյանին ուղղակի վաճառքով, ընդլայնման նպատակով օտարելու մասին.
25) Աբովյան համայնքի Աբովյան քաղաքի Հանրակացարանային թաղամասի թիվ 1/5 հասցեում գտնվող ավտոտնակի, դրա զբաղեցրած հողամասի կառուցապատման իրավունքը դադարեցնելու և անշարժ գույքը վարձակալության իրավունքով տրամադրելու մասին.
26) Աբովյան համայնքի սեփականություն հանդիսացող Բալահովիտ գյուղի Լ. Ավետիսյան փողոցի 61 շենքի թիվ 418 բնակարանն ուղղակի վաճառքով օտարելու մասին.
27) Աբովյան համայնքի սեփականություն հանդիսացող Աբովյան քաղաքի 2-րդ միկրոշրջանի 30 շենքի թիվ 13 բնակարանն անհատույց օտարելու մասին.
28) Աբովյան համայնքի սեփականություն հանդիսացող Հանրակացարանային թաղամասի 6 շենքի թիվ 56 և թիվ 60 բնակարաններն անհատույց օտարելու մասին.
29) Աբովյան համայնքի սեփականություն հանդիսացող Աբովյան քաղաքի Օգոստոսի 23-ի փողոցի 7 շենքի թիվ 510 բնակարանն անհատույց օտարելու մասին.
30) Աբովյան համայնքի սեփականություն հանդիսացող Աբովյան քաղաքի Հանրապետության պողոտայի 7 շենքի թիվ 32 բնակարանն անհատույց օտարելու մասին.
31) Բալահովիտ համայնքի ավագանու 2020 թվականի հուլիսի 24-ի N 25-Ա որոշմանը համաձայնություն տալու մասին.
32) Աբովյան համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 24-ի N 228-Ա որոշման մեջ լրացումներ կատարելու մասին.
33) Աբովյան համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերի վրա ինքնակամ կառուցված շինությունները և դրանց պահպանման ու սպասարկման համար առանձնացված հողամասերն ուղղակի վաճառքով օտարելու կամ վարձակալության իրավունքով տրամադրելու մասին.
34) Աբովյան համայնքի ավագանու հերթական նիստի գումարման օրը սահմանելու

մասին:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Զեկուցողի կողմից առաջարկվեց նախագծի 1-ին կետի 1-ին և 2-րդ ենթակետերը հանել օրակարգից հետևյալ պատճառաբանությամբ. 1-ին ենթակետով ներկայացված նախագծի վերաբերյալ, որը նորմատիվ բնույթի է, դեռևս չի ստացվել ՀՀ արդարադատության նախարարության փորձագիտական եզրակացությունը, իսկ 2-րդ հարցն անմիջականորեն կապված է դրա նախորդի հետ:

Նախագիծը դրվեց քվեարկության առաջարկված տարբերակով:

Կողմ-26 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(Որոշում N 15-Ա)*

**ԼՍԵՑԻՆ**

***ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՇԱՀԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԻՐԱՎԱՍՈՒ ԴԱՏԱՐԱՆ ՀԱՅՑ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***(Զեկ. ՋԱՆԻՆԱ ՍԱՐԳՍՅԱՆ)***

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետի, հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության 2025 թվականի փետրվարի 17-ի N 05.1//3025-2025 առաջարկությունը (մուտք՝ 2025 թվականի փետրվարի 17-ի N Պ-359), Աբովյան համայնքի ավագանին ***ո ր ո շ ու մ է՝***
1. Տալ համաձայնություն Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության կողմից հայց ներկայացնելու վերաբերյալ առաջարկությանը և համայնքային շահերի պաշտպանության նպատակով իրավասու դատարան հայց հարուցելու գործընթաց սկսել:
2. Լիազորել Աբովյան համայնքի ավագանու անդամ ---------------------------------- Աբովյան համայնքի ավագանու անունից հանդես գալ սույն որոշման առաջին կետում նշված գործողությունները Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով իրացնելու համար:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Որոշման նախագծի վերաբերյալ ավագանու մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն և առաջարկել է թեկնածուի վերաբերյալ հարցը տեղափոխվել ավագանու նիստի քննարկմանը:
Համայնքային շահերի պաշտպանության նպատակով իրավասու դատարան հայց հարուցելու գործընթացում առաջարկվեց ավագանու անդամ Ալեքսանդր Խաչատուրյանի թեկնածությունը:

Նախագիծը դրվեց քվեարկության առաջարկված տարբերակով:

Կողմ-26 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(Որոշում N 16-Ա)*

**ԼՍԵՑԻՆ**

***ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***(Զեկ. ԱՆՆԱ ՉՈԲԱՆՅԱՆ)***

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի, 83-րդ հոդվածի 2-րդ մասի, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 35-րդ հոդվածի 5-րդ մասի, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2019 թվականի մարտի 13-ի N 254-Ն հրամանի, Աբովյան համայնքի ավագանին ***ո ր ո շ ու մ է*** '
1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Աբովյան համայնքի 2024 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Որոշման նախագծի վերաբերյալ ավագանու մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

Ավագանու անդամ Վ. Գրիգորյանի կողմից հարց տրվեց համայնքում իրականացվող կապիտալ և ոչ կապիտալ աշխատանքների վերաբերյալ, մասնավորապես, որոնք են ավարտին հասցվել և որոնք չեն իրականացվել:
Զեկուցողի կողմից տրվեց պատասխան, որը ներառում էր հարցի վերաբերյալ մանրամասն տեղեկատվություն:

Որոշման նախագծի վերաբերյալ ավագանու մշտական հանձնաժողովը ձեռնպահ է քվեարկել, չի տվել որևէ եզրակացություն, հարցը թողնելով ավագանու նիստի քննարկմանը:

Կողմ-26 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(Որոշում N 17-Ա)*

**ԼՍԵՑԻՆ**

***ԱԲՈՎՅԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՀԱՇՎԵԿՇՌՈՒՄ ՀԱՇՎԱՌՎԱԾ ԳՈՒՅՔԵՐԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՇՎԵԿՇԻՌՆԵՐՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***(Զեկ. ԱՆՆԱ ՉՈԲԱՆՅԱՆ)***

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի, Արզականի համայնքի ավագանին ***ո ր ո շ ու մ է՝***

1. Արզականի համայնքապետարանի հաշվեկշռում հաշվառված 13 005 967 (տասներեք միլիոն հինգ հազար ինը հարյուր վաթսունյոթ) դրամ հաշվեկշռային արժեքով գույքերը հանել Արզականի համայնքապետարանի հաշվեկշռից և տեղափոխել համապատասխան համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների հաշվեկշիռ՝ համաձայն 1-14 հավելվածների:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Որոշման նախագծի վերաբերյալ ավագանու մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

Կողմ-26 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(Որոշում N 18-Ա)*

**<u>ԼՍԵՑԻՆ</u>**

***«ԴԵՄԵՐ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆԸ ՆԱԽՆԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ***

***(Զեկ. ԴԻԱՆՆԱ ԵՐԵՄՅԱՆ)***

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի, «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի նոյեմբերի 19-ի N 1325-Ն որոշման, հաշվի առնելով 2025 թվականի փետրվարի 14-ին կայացած հանրային քննարկման արդյունքները, հիմք ընդունելով «Դեմեր» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տնօրենի գրությունը (մուտք՝ 2024 թվականի դեկտեմբերի 13-ի N Տ-2476), Արզականի համայնքի ավագանին ***ո ր ո շ ու մ է՝***

1. Տալ նախնական համաձայնություն «Դեմեր» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Արզականի համայնքի Արամուսի բազալտների հանքավայրի Դեմեր 1 տեղամասում օգտակար հանածոյի արդյունահանման ժամկետի և ծավալների փոփոխման (ավելացման) աշխատանքներ իրականացնելու համար:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Որոշման նախագծի վերաբերյալ ավագանու մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

Կողմ-26 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(Որոշում N 19-Ա)*

**ԼՍԵՑԻՆ**

***ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***(Զեկ. ԱՐՄԵՆ ՇՄԱՎՈՆՅԱՆ)***

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 4.1-րդ կետի և 82.1-րդ հոդվածի 6-րդ մասի, Աբովյան համայնքի ավագանին ***ո ր ո շ ու մ է.***
1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Աբովյան համայնքի 2024 թվականի տարեկան աշխատանքային պլանի իրականացման վերաբերյալ հաշվետվությունը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Որոշման նախագծի վերաբերյալ ավագանու մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

Կողմ-26 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(Որոշում N 20-Ա)*

**ԼՍԵՑԻՆ**

***ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ «ՇԱԼԵՏ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***(Զեկ. ԱՐՄԵՆ ՇՄԱՎՈՆՅԱՆ)***

Համաձայն Հողային օրենսգրքի 48.1-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որոշմամբ հաստատված կարգի 46.2-րդ կետի «ա» ենթակետի, Աբովյան համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 24-ի N 203-Ն, 2025 թվականի հունվարի 23-ի N 04-Ն որոշումների, հիմք ընդունելով այն հանգամանքը, որ կառուցապատման իրավունքով տրամադրվող հողամասը համարվում է Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամաս, հաշվի առնելով «ՇԱԼԵՏ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության լիազորած անձ Գեորգի Աբրահամյանի դիմումը (մուտք՝ 2025 թվականի փետրվարի 26-ի N Տ-571), Աբովյան համայնքի ավագանին ***ո ր ո շ ու մ է՝***
1. Համայնքի սեփականություն հանդիսացող (հիմք՝ 2024 թվականի հունիսի 14-ի N 14062024-07-0142 վկայական) Աբովյան համայնքի Վերին Պտղնի գյուղի Նորավան թաղամասի 4-րդ փողոցի թիվ 1/1 հասցեում գտնվող բնակավայրերի նշանակության ընդհանուր օգտագործման հողամասը կառուցապատման իրավունքով՝ գովազդային վահանակ կառուցելու նպատակով, առանց մրցույթի, 5 (հինգ) տարի ժամկետով, տարեկան 10 000 (տասը հազար) դրամ վճարով

(ենթակա է վճարման համայնքապետարանի 900105201389 հաշվեհամարին) տրամադրել «ՇԱԼԵՏ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը:
2. Նախագծման թույլտվություն ստանալու, նախագիծ մշակելու, շինարարության թույլտվություն ստանալու դիմումներ ներկայացնելու համար սահմանվում է վեցամսյա ժամկետ, հակառակ դեպքում՝ սույն որոշումը կհամարվի ուժը կորցրած:
3. «ՇԱԼԵՏ» սահմանափակ պատասխանտվությամբ ընկերությունը պարտավոր է Աբովյանի համայնքապետարանի 900105201652 հաշվեհամարին վճարել 65 000 (վաթսունհինգ հազար) դրամ՝ համայնքի սեփականություն հանդիսացող անշարժ գույքի օգտագործման տրամադրման փաստաթղթերի նախապատրաստման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար և 10 000 (տասը հազար) դրամ՝ հացեի տրամադրման ծառայության վճար:
4. Սույն որոշումից ծագող իրավունքների նոտարական ձևակերպման և պետական գրանցման հետ կապված վճարների և տուրքերի վճարումը կատարվում է «ՇԱԼԵՏ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Ա. Քոսակյանը նշեց, որ ավագանու մշտական հանձնաժողովը առաջարկել է օրակարգի նախագծի 1-ին կետի 8-12-րդ ենթակետերում ներառված կառուցապատման իրավունքով վարձակալությամբ տրվող հողամասերի տարեկան վարձավճարի չափը 10 000 ( տասը հազար) դրամի փոխարեն սահմանել 20 000 (քսան հազար) դրամ:

Հարցերը դրվեցին քվեարկության առաջարկված տարբերակով:

Որոշման նախագծի վերաբերյալ ավագանու մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

Կողմ-18 Դեմ-0 Ձեռնպահ-8

Որոշումն ընդունված է. *(Որոշում N 21-Ա)*

**<u>ԼՍԵՑԻՆ</u>**

***ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ «ԻՄԻՋ ՍՏՐՈՅԿՈՄՊԼԵՔՍ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***(Զեկ. ԱՐՄԵՆ ՇՄԱՎՈՆՅԱՆ)***

Համաձայն Հողային օրենսգրքի 48.1-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որոշմամբ հաստատված կարգի 46.2-րդ կետի «ա» ենթակետի, Աբովյան համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 24-ի N 203-Ն, 2025 թվականի հունվարի 23-ի N 04-Ն որոշումների, հիմք ընդունելով այն հանգամանքը, որ կառուցապատման

իրավունքով տրամադրվող հողամասը համարվում է Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամաս, հաշվի առնելով «ԻՄԻՋ ՍՏՐՈՅԿՈՄՊԼԵՔՍ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տնօրենի դիմումը (մուտք՝ 2025 թվականի փետրվարի 26-ի N Տ-591), Աբովյան համայնքի ավագանին ***ո ր ո շ ու մ է՝***

1. Համայնքի սեփականություն հանդիսացող (հիմք՝ 2023 թվականի հունիսի 23-ի N 23062023-07-0157 վկայական) Աբովյան քաղաքի Է. Պետրոսյան փողոցի թիվ 9/1 հասցեում գտնվող բնակավայրերի ընդհանուր օգտագործման հողամասը, կառուցապատման իրավունքով՝ գովազդային վահանակ կառուցելու նպատակով, առանց մրցույթի, 5 (հինգ) տարի ժամկետով, տարեկան 10 000 (տասը հազար) դրամ վճարով (ենթակա է վճարման համայնքապետարանի 900105201389 հաշվեհամարին) տրամադրել «ԻՄԻՋ ՍՏՐՈՅԿՈՄՊԼԵՔՍ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը:

2. Նախագծման թույլտվություն ստանալու, նախագիծ մշակելու, շինարարության թույլտվություն ստանալու դիմումներ ներկայացնելու համար սահմանվում է վեցամսյա ժամկետ, հակառակ դեպքում՝ սույն որոշումը կհամարվի ուժը կորցրած:

3. «ԻՄԻՋ ՍՏՐՈՅԿՈՄՊԼԵՔՍ» սահմանափակ պատասխանտվությամբ ընկերությունը պարտավոր է Աբովյանի համայնքապետարանի 900105201652 հաշվեհամարին վճարել 65 000 (վաթսունհինգ հազար) դրամ՝ համայնքի սեփականություն հանդիսացող անշարժ գույքի օգտագործման տրամադրման փաստաթղթերի նախապատրաստման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար և 10 000 (տասը հազար) դրամ՝ հասցեի տրամադրման ծառայության վճար:

4. Սույն որոշումից ծագող իրավունքների նոտարական ձևակերպման և պետական գրանցման հետ կապված վճարների և տուրքերի վճարումը կատարվում է «ԻՄԻՋ ՍՏՐՈՅԿՈՄՊԼԵՔՍ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում «ԻՄԻՋ ՍՏՐՈՅԿՈՄՊԼԵՔՍ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը որոշման ընդունման մասին իրազեկելուն հաջորդող օրվանից:

Որոշման նախագծի վերաբերյալ ավագանու մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

Կողմ-18 Դեմ-0 Ձեռնպահ-8

Որոշումն ընդունված է. *(Որոշում N 22-Ա)*

<u>ԼՍԵՑԻՆ</u>

***ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ «ԲԻԹԻԷԼ ՍԵՐՎԻՍԻՍ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***(Զեկ. ԱՐՄԵՆ ՇՄԱՎՈՆՅԱՆ)***

Համաձայն Հողային օրենսգրքի 48[1]-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որոշմամբ հաստատված կարգի 46.2-րդ կետի «ա» ենթակետի, Աբովյան համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 24-ի N 203-Ն, 2025 թվականի հունվարի 23-ի N 04-Ն որոշումների, հիմք ընդունելով այն հանգամանքը, որ կառուցապատման իրավունքով տրամադրվող հողամասերը համարվում են Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասեր, հաշվի առնելով «ԲԻԹԻԷԼ ՍԵՐՎԻՍԻՍ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության լիազորված անձ Ներսես Բարսամյանի դիմումը (մուտք՝ 2025 թվականի փետրվարի 26-ի N Տ-569), Աբովյան համայնքի ավագանին ***ո ր ո շ ու մ  է՝***

1. Համայնքի սեփականություն հանդիսացող՝ թվով 16 բնակավայրերի նշանակության ընդհանուր օգտագործման հողամասերը, կառուցապատման իրավունքով՝ գովազդային վահանակ կառուցելու նպատակով, առանց մրցույթի, 5 (հինգ) տարի ժամկետով, յուրաքանչյուրը տարեկան 10 000 (տասը հազար) դրամ վճարով (ենթակա է վճարման համայնքապետարանի 900105201389 հաշվեհամարին) տրամադրել «ԲԻԹԻԷԼ ՍԵՐՎԻՍԻՍ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը՝ համաձայն հավելվածի:
2. Նախագծման թույլտվություններ ստանալու, նախագծեր մշակելու, շինարարության թույլտվություններ ստանալու դիմումներ ներկայացնելու համար սահմանվում է վեցամսյա ժամկետ, հակառակ դեպքում սույն որոշումը կհամարվի ուժը կորցրած:
3. «ԲԻԹԻԷԼ ՍԵՐՎԻՍԻՍ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը պարտավոր է Աբովյանի համայնքապետարանի 900105201652 հաշվեհամարին վճարել յուրաքանչյուր հողամասի համար 65 000 (վաթսունհինգ հազար) դրամ՝ համայնքի սեփականություն հանդիսացող անշարժ գույքերի օգտագործման տրամադրման փաստաթղթերի նախապատրաստման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար և 10 000 (տասը հազար) դրամ՝ հասցեների տրամադրման ծառայության վճար:
4. Սույն որոշումից ծագող իրավունքների նոտարական ձևակերպման և պետական գրանցման հետ կապված վճարների և տուրքերի վճարումը կատարվում է «ԲԻԹԻԷԼ ՍԵՐՎԻՍԻՍ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընկերությանը որոշման ընդունման մասին իրազեկելուն օրվան հաջորդող օրվանից:

Որոշման նախագծի վերաբերյալ ավագանու մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

Կողմ-18 Դեմ-0 Ձեռնպահ-8

Որոշումն ընդունված է. *(Որոշում N 23-Ա)*

__ԼՍԵՑԻՆ__

***ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ «ԷԴԳԱՐ ԳԱԼՍՏՅԱՆ ԱՐՏԱԿԻ» ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՋԸ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

*(Զեկ. ԱՐՄԵՆ ՇՄԱՎՈՆՅԱՆ)*

Համաձայն Հողային օրենսգրքի 48.1-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որոշմամբ հաստատված կարգի 46.2-րդ կետի «ա» ենթակետի, Աբովյան համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 24-ի N 203-Ն, 2025 թվականի հունվարի 23-ի N 04-Ն որոշումների, հիմք ընդունելով այն հանգամանքը, որ կառուցապատման իրավունքով տրամադրվող հողամասը համարվում է Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամաս, հաշվի առնելով «ԷԴԳԱՐ ԳԱԼՍՏՅԱՆ ԱՐՏԱԿԻ» անհատ ձեռնարկատիրոջ դիմումը (մուտք՝ 2025 թվականի փետրվարի 24-ի N Ք-1077), Աբովյան համայնքի ավագանին ***ո ր ո շ ու մ է՝***

1. Համայնքի սեփականություն հանդիսացող (հիմք՝ 2024 թվականի հունիսի 14-ի N 14062024-07-0148 վկայական) Աբովյան քաղաքի Հանրապետության պողոտայի թիվ 13/15 հասցեում գտնվող բնակավայրերի նշանակության ընդհանուր օգտագործման հողամասը, կառուցապատման իրավունքով՝ գովազդային վահանակ կառուցելու նպատակով, առանց մրցույթի, 5 (հինգ) տարի ժամկետով, տարեկան 10 000 (տասը հազար) դրամ վճարով (ենթակա է վճարման համայնքապետարանի 900105201389 հաշվեհամարին) տրամադրել «ԷԴԳԱՐ ԳԱԼՍՏՅԱՆ ԱՐՏԱԿԻ» անհատ ձեռնարկատիրոջը:
2. Նախագծման թույլտվություն ստանալու, նախագիծ մշակելու, շինարարության թույլտվություն ստանալու դիմումներ ներկայացնելու համար սահմանվում է վեցամսյա ժամկետ, հակառակ դեպքում՝ սույն որոշումը կհամարվի ուժը կորցրած:
3. «ԷԴԳԱՐ ԳԱԼՍՏՅԱՆ ԱՐՏԱԿԻ» անհատ ձեռնարկատերը պարտավոր է Աբովյանի համայնքապետարանի 900105201652 հաշվեհամարին վճարել 65 000 (վաթսունհինգ հազար) դրամ՝ համայնքի սեփականություն հանդիսացող անշարժ գույքի օգտագործման տրամադրման փաստաթղթերի նախապատրաստման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար և 10 000 (տասը հազար) դրամ՝ հասցեի տրամադրման ծառայության վճար:
4. Սույն որոշումից ծագող իրավունքների նոտարական ձևակերպման և պետական գրանցման հետ կապված վճարների և տուրքերի վճարումը կատարվում է «ԷԴԳԱՐ ԳԱԼՍՏՅԱՆ ԱՐՏԱԿԻ» անհատ ձեռնարկատիրոջ կողմից:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում «ԷԴԳԱՐ ԳԱԼՍՏՅԱՆ ԱՐՏԱԿԻ» անհատ ձեռնարկատիրոջը որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Որոշման նախագծի վերաբերյալ ավագանու մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

Կողմ-18 Դեմ-0 Ձեռնպահ-8

Որոշումն ընդունված է. *(Որոշում N 24-Ա)*

**ԼՍԵՑԻՆ**

***ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ «ԿԻՆԳ ԴԵԼՅՈՒՔՍԵ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***(Զեկ. ԱՐՄԵՆ ՇՄԱՎՈՆՅԱՆ)***

Համաձայն Հողային օրենսգրքի 48.1-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որոշմամբ հաստատված կարգի 46.2-րդ կետի, «ա» ենթակետի, Աբովյան համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 24-ի 203-Ն, 2025 թվականի հունվարի 23-ի 04-Ն որոշումների, հիմք ընդունելով այն հանգամանքը, որ կառուցապատման իրավունքով տրամադրվող հողամասերը համարվում են Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասեր, հաշվի առնելով «ԿԻՆԳ ԴԵԼՅՈՒՔՍԵ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տնօրենի դիմումը (մուտք՝ 2025 թվականի փետրվարի 28-ի N Տ-614), Աբովյան համայնքի ավագանին ***ո ր ո շ ու մ  է՝***

1. Համայնքի սեփականություն հանդիսացող (հիմք՝ 2024 թվականի օգոստոսի 15-ի N 15082024-07-0065 և 15082024-07-0051 վկայականներ) Աբովյան քաղաքի Հանրապետության պողոտայի թիվ 9/15 և Երևանյան փողոցի թիվ 9/5 հասցեներում գտնվող բնակավայրերի նշանակության ընդհանուր օգտագործման հողամասերը, կառուցապատման իրավունքով՝ գովազդային վահանակ կառուցելու նպատակով, առանց մրցույթի, 5 (հինգ) տարի ժամկետով, յուրաքանչյուրը տարեկան 10 000 (տասը հազար) դրամ վճարով (ենթակա է վճարման համայնքապետարանի 900105201389 հաշվեհամարին) տրամադրել «ԿԻՆԳ ԴԵԼՅՈՒՔՍԵ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը:

2. Նախագծման թույլտվություններ ստանալու, նախագծեր մշակելու, շինարարության թույլտվություններ ստանալու դիմումներ ներկայացնելու համար սահմանվում է վեցամսյա ժամկետ, հակառակ դեպքում՝ սույն որոշումը կհամարվի ուժը կորցրած:

3. «ԿԻՆԳ ԴԵԼՅՈՒՔՍԵ» սահմանափակ պատասխանտվությամբ ընկերությունը պարտավոր է Աբովյանի համայնքապետարանի 900105201652 հաշվեհամարին վճարել յուրաքանչյուր հողամասի համար 65 000 (վաթսունհինգ հազար) դրամ՝ համայնքի սեփականություն հանդիսացող անշարժ գույքերի օգտագործման տրամադրման փաստաթղթերի նախապատրաստման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար և 10 000 (տասը հազար) դրամ՝ հասցեների տրամադրման ծառայության վճար:

4. Սույն որոշումից ծագող իրավունքների նոտարական ձևակերպման և պետական գրանցման հետ կապված վճարների և տուրքերի վճարումը կատարվում է «ԿԻՆԳ ԴԵԼՅՈՒՔՍԵ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում «ԿԻՆԳ ԴԵԼՅՈՒՔՍԵ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը որոշման ընդունման մասին իրազեկելուն հաջորդող օրվանից:

Որոշման նախագծի վերաբերյալ ավագանու մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

Կողմ-18 Դեմ-0 Ձեռնպահ-8

Որոշումն ընդունված է. *(Որոշում N 25-Ա)*

<u>ԼՍԵՑԻՆ</u>

***ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 24-Ի N 211-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***(Զեկ. ԱՐՄԵՆ ՇՄԱՎՈՆՅԱՆ)***

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի նոյեմբերի 2-ի N 1890-Ն որոշման 14-րդ կետի դրույթները, Աբովյան համայնքի ավագանին ***ո ր ո շ ու մ է՝***

1. Աբովյան համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 24-ի «Աբովյան համայնքում 2025 թվականի մասնակցային բյուջետավորման գործընթացը սկսելու մասին» N 211-Ա որոշման 4-րդ կետում «գումարի» բառից հետո լրացնել «՝ 58 933 900 (հիսունութ միլիոն ինը հարյուր երեսուներեք հազար ինը հարյուր) դրամի առնվազն» բառերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունմանը հաջորդող օրվանից:

Որոշման նախագծի վերաբերյալ ավագանու մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

Կողմ-26 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(Որոշում N 26-Ա)*

<u>ԼՍԵՑԻՆ</u>

***ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 11-Ի N 191-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***(Զեկ. ԱՐՄԵՆ ՇՄԱՎՈՆՅԱՆ)***

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների և հաշվի առնելով 2024 թվականի մասնակցային բյուջետավորման գործընթացի կառավարման հանձնաժողովի նախագահի Մերուժան Մելիքսեթյանի (մուտք՝ 2025 թվականի մարտի 07-ի N Ք-1424) և համայնքի ղեկավարի առաջին տեղակալ Դավիթ Զարոյանի (մուտք՝ 2025 թվականի մարտի 07-ի N Ք-1425) զեկուցագրերը, Աբովյան համայնքի ավագանին ***ո ր ո շ ու մ է՝***

1. Աբովյան համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 11-ի «Աբովյան համայնքում 2024 թվականի մասնակցային բյուջետավորման գործընթացը սկսելու մասին» N 191-Ա որոշման 6-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ.

«6. Ներկայացվող յուրաքանչյուր առաջարկ-նախագծի իրականացման համար նախատեսվող գումարի առավելագույն չափը կարող է կազմել մինչև 170 961 000 (հարյուր յոթանասուն միլիոն ինը հարյուր վաթսունմեկ հազար) դրամ, որից

պետական ֆինանսավորման մասնաբաժին՝ 136 768 800 (հարյուր երեսունվեց միլիոն յոթ հարյուր վաթսունութ հազար ութ հարյուր) դրամ, համայնքի ֆինանսավորման մասնաբաժին՝ 41 767 944 (քառասունմեկ միլիոն յոթ հարյուր վաթսունյոթ հազար ինը հարյուր քառասունչորս) դրամ:»:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունմանը հաջորդող օրվանից:

Որոշման նախագծի վերաբերյալ ավագանու մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

Կողմ-26 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(Որոշում N 27-Ա)*

<u>**ԼՍԵՑԻՆ**</u>

***ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՄԵԿՆԱՐԿԱԾ ՏԵՂԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՀԱՅՏԱՐԱՐՎԱԾ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ՄՐՑՈՒՅԹԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ***

***(Զեկ. ԱՐՄԵՆ ՇՄԱՎՈՆՅԱՆ)***

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի և 13-րդ հոդվածի 10-րդ մասի, հիմք ընդունելով Կոտայքի մարզպետի 2025 թվականի փետրվարի 11-ի N 01/05/01123-2025 գրությունը (մուտք՝ 2025 թվականի փետրվարի 13-ի N Պ-326), Աբովյան համայնքի ավագանին ***ո ր ո շ ու մ է՝***
1. Ներկայացնել մասնակցության հայտ Գերմանական միջազգային համագործակցության ընկերության կողմից մեկնարկած Տեղական զարգացման հիմնադրամի շրջանակներում հայտարարված դրամաշնորհային մրցույթին՝ հրավերում նշված երեք ոլորտներում (հայտերի ներկայացման հրավերը կցվում է):
2. Համաձայնություն տալ Գերմանական միջազգային համագործակցության ընկերության կողմից համայնքի ներկայացրած ծրագրերի ընտրության դեպքում համայնքի տվյալ տարվա բյուջեից յուրաքանչյուր ծրագրի իրականացման համար հատկացնել առնվազն 20% համաֆինանսավորում՝ համաձայն հայտերի ներկայացման հրավերի:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Որոշման նախագծի վերաբերյալ ավագանու մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

Կողմ-26 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(Որոշում N 28-Ա)*

<u>**ԼՍԵՑԻՆ**</u>

***ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 24-Ի N 230-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***(Զեկ. ԱՐՄԵՆ ՇՄԱՎՈՆՅԱՆ)***

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների, Աբովյան համայնքի ավագանին ***ո ր ո շ ու մ է՝***
1. Աբովյան համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 24-ի «Աբովյան համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերը մրցութային կարգով վարձակալության իրավունքով տրամադրելուն համաձայնություն տալու մասին» N 230-Ա որոշման հավելվածը լրացնել նոր՝ 4-5-րդ տողերով՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Քննարկման արդյունքում հանձնաժողովի նիստում առաջարկվել է նախագծի 16-րդ ենթակետի հավելվածի 4-րդ տողով սահմանված հողամասի 1 000 000 (մեկ միլիոն) ՀՀ դրամ մեկնարկային արժեքը դարձնել 2 000 000 (երկու միլիոն) ՀՀ դրամ, 5-րդ տողով սահմանված հողամասի 1 000 000 (մեկ միլիոն) ՀՀ դրամ մեկնարկային արժեքը դարձնել 1 500 000 (մեկ միլիոն հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ:

Պ. Յուգունյանը նշեց, որ արդյունքում որոշվել է նախագծի հավելվածի 5-րդ տողը հանել ցանկից:

Նախագիծը դրվեց քվեարկության առաջարկված տարբերակով:

Որոշման նախագծի վերաբերյալ ավագանու մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

Կողմ-26 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(Որոշում N 29-Ա)*

<u>**ԼՍԵՑԻՆ**</u>

***ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱԲՈՎՅԱՆ ՔԱՂԱՔԻ ՆԱԻՐՅԱՆ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 3 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՄԱՐԶԱՀԱՄԱԼԻՐԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՄԲ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ***

***(Զեկ. ԱՐՄԵՆ ՇՄԱՎՈՆՅԱՆ)***

Համաձայն Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 693-րդ հոդվածի 2-րդ մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի, հիմք ընդունելով Աբովյան համայնքի և «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» հասարակական կազմակերպության միջև 2020 թվականի օգոստոսի 28-ին կնքված անշարժ գույքի անհատույց օգտագործման պայմանագրի 2.3.3-րդ կետը և «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» հասարակական կազմակերպության նախագահի Արմեն Մելիքբեկյանի դիմումը (մուտք՝ 2025 թվականի մարտի 04-ի N Տ-650), Աբովյան համայնքի ավագանին ***ո ր ո շ ու մ է՝***

1. Համաձայնություն տալ «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» հասարակական կազմակերպությանն անհատույց օգտագործման իրավունքով տրամադրված Աբովյան համայնքի Աբովյան քաղաքի Նաիրյան փողոցի թիվ 3 հասցեում գտնվող մարզահամալիրը մինչև 2035 թվականի օգոստոսի 01-ը «Աբովյան ակադեմիա» ֆուտբոլային հասարակական կազմակերպությանը վարձակալությամբ տրամադրելուն:

2. Լիազորել համայնքի ղեկավարին կնքել համաձայնագիր՝ Աբովյան համայնքի և «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» հասարակական կազմակերպության միջև 2020 թվականի օգոստոսի 28-ին կնքված անշարժ գույքի անհատույց օգտագործման պայմանագրի 1.2. կետում շարադրված գույքի կազմը համապատասխանեցնել 2024 թվականի մայիսի 14-ի N 14052024-07-0158 անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականով ամրագրված շինությունների բնութագրին:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Որոշման նախագծի վերաբերյալ ավագանու մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

Կողմ-26 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(Որոշում N 30-Ա)*

<u>ԼՍԵՑԻՆ</u>

***ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԲԱԼԱՀՈՎԻՏ ԳՅՈՒՂՈՒՄ ԳՏՆՎՈՂ 07-018-0077-0016 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***(Զեկ. ԱՐԱՄ ՎԻՐԱԲՅԱՆ)***

Համաձայն Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի, 7-րդ հոդվածի 9-րդ և 15-րդ մասերի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի և հիմք ընդունելով Մուշեղ Սաֆարյանի դիմումը (մուտք՝ 2025 թվականի մարտի 04-ի N Ք-1295), Աբովյան համայնքի ավագանին ***ո ր ո շ ու մ է.***

1. Մուշեղ և Ջվարթ Սաֆարյաններին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող (հիմք՝ 2003 թվականի դեկտեմբերի 10-ի N 14052024-07-0091 վկայական) Աբովյան համայնքի Բալահովիտ գյուղում գտնվող 07-018-0077-0016 կադաստրային ծածկագրով 0.0991 հեկտար մակերեսով գյուղատնտեսական նշանակության (վարելահող) հողամասի նպատակային նշանակությունը փոփոխել արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության գյուղատնտեսական արտադրական օբյեկտների՝ մրգերի և բանջարեղենի մշակման և պահածոյացման (չներառված ուրիշ խմբավորումներում) տնտեսություն կառուցելու նպատակով:

2. Սահմանել, որ հողամասի նպատակային նշանակությունը փոփոխված է համարվում պարզեցված կարգով, միայն սեփականատիրոջ հայտի համաձայն, համայնքի ավագանու կողմից այդ հողամասի նպատակային նշանակությունը

փոփոխելու և համայնքի ղեկավարի կողմից տվյալ հողամասի ճարտարապետահատակագծային առաջադրանքը տրամադրելու մասին սահմանված կարգով կայացված որոշումներն ուժի մեջ մտնելուց և հողամասի նկատմամբ փոխված նպատակային նշանակությամբ իրավունքները պետական գրանցում ստանալուց հետո:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Որոշման նախագծի վերաբերյալ ավագանու մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

Կողմ-26 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(Որոշում N 31-Ա)*

<u>**ԼՍԵՑԻՆ**</u>

***ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐԱՄՈՒՍ ԳՅՈՒՂՈՒՄ ԳՏՆՎՈՂ 07-013-0176-0002 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***(Զեկ. ԱՐԱՄ ՎԻՐԱԲՅԱՆ)***

Համաձայն Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի, 7-րդ հոդվածի 9-րդ և 15-րդ մասերի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի և հիմք ընդունելով Վանիկ Հովհաննիսյանի հայտը (մուտք՝ 2025 թվականի փետրվարի 25-ի N Ք-1133), Աբովյան համայնքի ավագանին ***ո ր ո շ ու մ է.***
1. Վանիկ Հովհաննիսյանին սեփականության իրավունքով պատկանող (հիմք՝ 2014 թվականի մայիսի 16-ի N 03122024-07-0176 վկայական) Աբովյան համայնքի Արամուս գյուղում գտնվող 07-013-0176-0002 կադաստրային ծածկագրով 0.1147 հեկտար մակերեսով գյուղատնտեսական նշանակության (հնդավոր) հողամասի նպատակային նշանակությունը փոփոխել արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության գյուղատնտեսական արտադրական օբյեկտների՝ մրգերի և բանջարեղենի մշակման և պահածոյացման (չներառված ուրիշ խմբավորումներում) տնտեսություն կառուցելու նպատակով:
2. Սահմանել, որ հողամասի նպատակային նշանակությունը փոփոխված է համարվում պարզեցված կարգով, միայն սեփականատիրոջ հայտի համաձայն, համայնքի ավագանու կողմից այդ հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու և համայնքի ղեկավարի կողմից տվյալ հողամասի ճարտարապետահատակագծային առաջադրանքը տրամադրելու մասին սահմանված կարգով կայացված որոշումներն ուժի մեջ մտնելուց և հողամասի նկատմամբ փոխված նպատակային նշանակությամբ իրավունքները պետական գրանցում ստանալուց հետո:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Վանիկ Հովհաննիսյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Որոշման նախագծի վերաբերյալ ավագանու մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

Կողմ-26 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(Որոշում N 32-Ա)*

**ԼՍԵՑԻՆ**

***ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՊՏՂՆԻ ԳՅՈՒՂՈՒՄ ԳՏՆՎՈՂ 07-054-0315-0273 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ 0.075 ՀԵԿՏԱՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***(Զեկ. ԱՐԱՄ ՎԻՐԱԲՅԱՆ)***

Համաձայն Հողային օրենսգրքի 3-րդ և 7-րդ հոդվածների, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետի, «Քաղաքաշինության մասին» օրենքի 143-րդ հոդվածի 5-րդ մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշմամբ հաստատված կարգի 60-րդ կետի և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի 2025 թվականի հունվարի 22-ի N 2/փ-20 դրական եզրակացությունը, հաշվի առնելով Կոտայքի մարզպետի 2025 թվականի հունվարի 23-ի N 01/03.1/00592-2025 գրությունը (մուտք՝ 2025 թվականի հունվարի 23-ի N Պ-158) և Ջուլիետա Բրսոյանի դիմումը (մուտք՝ 2024 թվականի մարտի 01-ի N Ք-1526), Աբովյան համայնքի ավագանին ***ո ր ո շ ու մ է.***

1. Ջուլիետա Բրսոյանին պատկանող (հիմք՝ 2024 թվականի փետրվարի 16-ի N 16022024-07-0155 վկայական) Աբովյան համայնքի Պտղնի գյուղում գտնվող 07-054-0315-0273 կադաստրային ծածկագրով 0,075 հեկտար մակերեսով հողամասի նպատակային նշանակությունը գյուղատնտեսական նշանակությունից փոփոխել բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի՝ գլխավոր հատակագծում կատարել համապատասխան փոփոխություն:

2. Ջուլիետա Բրսոյանը պարտավոր է 0,075 հեկտար մակերեսով գյուղատնտեսական նշանակության հողամասի նպատակային նշանակության փոփոխության համար Աբովյանի համայնքապետարանի 900105201363 հաշվեհամարին վճարել հողամասի տվյալ պահին գործող կադաստրային արժեքների տարբերությունը, որը կազմում է 2 165 625 (երկու միլիոն հարյուր վաթսունհինգ հազար վեց հարյուր քսանհինգ) դրամ:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ջուլիետա Բրսոյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Որոշման նախագծի վերաբերյալ ավագանու մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

Կողմ-26 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(Որոշում N 33-Ա)*

<u>ԼՍԵՑԻՆ</u>

